ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ԲԱԺՆԻ ՓՈՐՁԱԳԵՏ ԼԻԱՆԱ ՄԿՐՏՉՅԱՆԻՑ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ԲԱԺՆԻ ՊԵՏԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
ԿԱՏԱՐՈՂ ՔՐԻՍՏԻՆԵ ՄԱՅԻԼՅԱՆԻՆ

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

05.10.2022- 21.12.2022 թթ. ժամանակահատվածի համար

Հաշվետու ժամանակահատվածում իմ կողմից գլխավոր քարտուղարի և /կամ/ բաժնի պետի գրավոր կամ բանավոր հանձնարարությամբ իրականացվել են հետևյալ աշխատանքները.

- ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության (այսուհետ՝ Նախարարություն) 2023 թվականի կարիքների համար՝ նախարարության կողմից օգտագործվող օդորակիչների տեխնիկական սպասարկման և վերանորոգման ծառայությունների՝ «գնանշման հարցում» ԱՍՀՆ-ԳՀԾՁԲ-23/13 ծածկագրով գնման ընթացակարգի կազմակերպում, ամփոփում:
- Նախարարության 2023 թվականի կարիքների համար ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման և վերանորոգման ծառայությունների «գնանշման հարցում» ԱՍՀՆ-ԳՀԾՁԲ-23/15 ծածկագրով գնման ընթացակարգի կազմակերպում, ամփոփում:
- Նախարարության 2023 թվականի կարիքների համար «Ընտանիքի կենսամակարդակի բարձրացմանն ուղղված նպաստների տրամադրման անհրաժեշտ ձևաթղթերի տպագրություն միջոցառման» ծրագրի շրջանակներում տպագրական և առաքման ծառայությունների «էլեկտրոնային աճուրդ» ԱՍՀՆ-ԷԱՃԾՁԲ-23/5 ծածկագրով գնման ընթացակարգի կազմակերպում, վերահայտարարում:
- Նախարարության 2023 թվականի կարիքների համար «Սոցիալական պաշտպանությանը տրամադրվող օժանդակ ծառայություններ՝ հանրային իրազեկման միջոցառումների իրականացում» ծրագրի շրջանակներում տպագրական և առաքման ծառայությունների «էլեկտրոնային աճուրդ» գնման ընթացակարգի կազմակերպում, վերահայտարարում:
- Նախարարության 2023 թվականի կարիքների համար կենցաղային և հանրային սննդի նյութերի «էլեկտրոնային աճուրդ» գնման ընթացակարգի կազմակերպում, վերահայտարարում:
- Նախարարության ենթակայության պետական ոչ առևտրային կազմակերպությունների (ք. Երևան և Արարատի մարզի Նոր Խարբերդ համայնք) 2023 թվականի կարիքների համար սննդամթերքի կենտրոնացված կարգով՝

«գնանշման հարցում» գնման ընթացակարգի կազմակերպում, վերահայտարարում:

- Նախարարության ենթակայության «Շիրակի մարզի երեխայի և ընտանիքի աջակցության կենտրոն» և «Գյումրու «Երեխաների տուն» պետական ոչ առևտրային կազմակերպությունների 2023 թվականի կարիքների համար հանդերձանքի և անկողնային պարագաների կենտրոնացված կարգով՝ «էլեկտրոնային աճուրդ» գնման ընթացակարգի կազմակերպում:
- Նախարարության ենթակայության «Վարդենիսի նյարդահոգեբանական տուն ինտերնատ» պետական ոչ առևտրային կազմակերպության 2023 թվականի կարիքների համար հանդերձանքի և անկողնային պարագաների կենտրոնացված կարգով՝ «էլեկտրոնային աճուրդ» գնման ընթացակարգի կազմակերպում:
- Ակնաշեն և Մրգաստան համայնքներում գտնվող առանձնատների վերանորոգման շինարարական աշխատանքների 2022 թվականին ձեռքբերվող տեխնիկական և հեղինակային հսկողության ծառայությունների ձեռքբերման գնման ընթացակարգի կազմակերպում,
- Դրամաշնորհների հատկացման նպատակով մրցութային հանձնաժողովներ ստեղծելու, դրանց անհատական կազմը և դրամաշնորհի հատկացման ընթացակարգը հաստատելու մասին հրամանի նախագծի կազմում, շրջանառում /Հայաստանի Հանրապետության 2023 թվականի պետական բյուջեով նախատեսվելիք միջոցների հաշվին իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող կազմակերպություններին (այսուհետ՝ կազմակերպություն) դրամաշնորհների հատկացման ընթացակարգը կանոնակարգելու նպատակով/
- Նախարարության 2022 թվականի կարիքների համար տպագրական և առաքման ծառայությունների «էլեկտրոնային աճուրդ» գնման ընթացակարգի վերահայտարարում և ամփոփում:

- ՀՀ 2023 թվականի պետական բյուջեից իրավաբանական անձանց դրամաշնորհների հատկացման նպատակով մրցույթների հայտարարում: Հայտարարվել են թվով 12 դրամաշնորհային մրցույթ:

1. «ԱՍՀՆ-ԴՄ-ՏՊԽԾ-23/4» ծածկագրով «Տարեց և (կամ) հաշմանդամություն ունեցող անձանց տնային պայմաններում խնամքի ծառայություններ» ծրագրի իրականացման նպատակով հայտարարված դրամաշնորհի հատկացման մրցույթ:
2. «ԱՍՀՆ-ԴՄ-ՑԿՏԾ-23/5» ծածկագրով «18 տարին լրացած անձանց ցերեկային կենտրոններում խնամքի և սննդի տրամադրման ծառայություններ» ծրագրի իրականացման նպատակով հայտարարված դրամաշնորհի հատկացման մրցույթ:
3. «ԱՍՀՆ-ԴՄ-ՇԽԾԼՄ-23/3» ծածկագրով «Տարեց և (կամ) հաշմանդամություն ունեցող անձանց շուրջօրյա խնամքի ծառայություններ Լոռու մարզում» ծրագրի իրականացման նպատակով հայտարարված դրամաշնորհի հատկացման մրցույթ:

4. «ԱՍՀՆ-ԴՄ-ՕՏԾ-23/2» ծածկագրով «Անօթևան մարդկանց համար ժամանակավոր օթևանի տրամադրման ծառայություններ» ծրագրի իրականացման նպատակով հայտարարված դրամաշնորհի հատկացման մրցույթ:
5. «ԱՍՀՆ-ԴՄ-ՀՍՎԾ-23/8» ծածկագրով «Հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալ-վերականգնողական ծառայություններ ցերեկային կենտրոնում» ծրագրի իրականացման նպատակով հայտարարված դրամաշնորհի հատկացման մրցույթ:

6. «ԱՍՀՆ-ԴՄ-ՀՇԽԾ-23/7» ծածկագրով ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից «Հաշմանդամություն ունեցող անձանց շուրջօրյա խնամքի ծառայություններ համայնքահենք փոքր խմբային տներում» ծրագրի իրականացման նպատակով հայտարարված դրամաշնորհի հատկացման մրցույթ:

7. «ԱՍՀՆ-ԴՄ-ՏԽՎ-23/6» ծածկագրով ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից «Տեսողության խնդիրներ ունեցող անձանց սոցիալ-հոգեբանական վերականգնում» ծրագրի իրականացման նպատակով հայտարարված դրամաշնորհի հատկացման մրցույթ:

8. «ԱՍՀՆ-ԴՄ-ԵԽՑԾ-23/9» ծածկագրով «Երեխաների խնամքի ցերեկային ծառայությունների տրամադրում» ծրագրի իրականացման նպատակով հայտարարված դրամաշնորհի հատկացման մրցույթ:

9. «ԱՍՀՆ-ԴՄ-ԹԵՎԾ-23/9» ծածկագրով «Թրաֆիքինգի և շահագործման, սեռական բռնության ենթարկված անձանց սոցիալ-հոգեբանական վերականգնողական ծառայություններ» ծրագրի իրականացման նպատակով հայտարարված դրամաշնորհի հատկացման մրցույթ:

10. «ԱՍՀՆ-ԴՄ-ԸԲԵԱԾ-23/10» ծածկագրով «Ընտանիքում բռնության ենթարկված անձանց ապաստարանի ծառայություններ» ծրագրի իրականացման նպատակով հայտարարված դրամաշնորհի հատկացման մրցույթ:

11. «ԱՍՀՆ-ԴՄ-ԱԿԾ-23/11» ծածկագրով «Ընտանիքում բռնության ենթարկված անձանց աջակցության կենտրոնների ծառայություններ» ծրագրի իրականացման նպատակով հայտարարված դրամաշնորհի հատկացման մրցույթ:

12 «ԱՍՀՆ-ԴՄ-ՍՇՕ-23/1» ծածկագրով «Սոցիալական շտապօգնություն» ծրագրի իրականացման նպատակով հայտարարված դրամաշնորհի հատկացման մրցույթ:

- Ծրագրերի իրականացման շրջանակներում չկայացած չափաբաժինների վերահայտարարում:
- Գնման ընթացակարգերի հայտարարության տեքստերի /հայերեն, ռուսերեն և անգլերեն լեզուներով/, գնահատող հանձնաժողով ստեղծելու մասին հրամանների, ինչպես նաև պարտադիր հրապարակման ենթակա փաստաթղթերի նախագծերի կազմում և ներկայացում հաստատման,

- Գնահատող հանձնաժողովի կազմում ընդգրկված ՊՈԱԿ-ների աշխատակիցներին մեթոդական օժանդակության ցուցաբերում՝ էլեկտրոնային եղանակով մասնակիցների կողմից ներկայացված հայտերը գնահատելու, գնման հայտերում արձանագրված անճշտությունները շտկելու, գնումների մասին ՀՀ օրենսդրության հետ կապված այլ հարցերի մասով,
- Գնման ընթացակարգերի հայտարարման նպատակով աշխատակարգային տվյալների մուտքագրում գնումների պլանավորման, պայմանագրերի կառավարման և հաշվետվողականության էլեկտրոնային ենթամոդուլ /ppcm/ համակարգ, անցում կատարելով eauction.armeps.am կամ armeps.am համակարգեր,
- Mulberry փաստաթղթաշրջանառության համակարգի միջոցով մակագրված հանձնարարականների կատարում, գրությունների կազմում, շջանառում,
- Կնքված պայմանագրերի մուտքագրում գնումների պլանավորման, պայմանագրերի կառավարման և հաշվետվողականության էլեկտրոնային ենթամոդուլ /ppcm/ համակարգ,
- Դրամաշնորհների հատկացման նպատակով անցկացված մրցույթի արդյունքում հաղթող ճանաչված սոցիալական պաշտպանության ոլորտում ծառայություններ մատուցող իրավաբանական կամ իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող կազմակերպությունների դրամաշնորհի ձևով տրամադրվող ֆինանսական աջակցության պայմանագրի կատարման մասին ամենամյա ամփոփ արձանագրությունների կազմում, ներկայացում հաստատման:

Գնումների համակարգման բաժնի փորձագետ [signature] Լ. Մկրտչյան

21.12.2022թ.

կարգավորել գնահատում

ԱՍՀՆ գնումների համակարգման [illegible] կարգավորել [illegible]

[illegible] գնահատում

[signature]